ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ.

ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մինիստրության կոչմամբ, համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կառավարման կոմիտեի հետ, «Լույս» արտադրական միավորման կազմի մեջ է մտցված Ստեփանակերտի ԼՂԻՄ-ի 10-ամյակի անվան էլեկտրատեխնիկական գործարանը։

Արցախի լուսատեխնիկների և նրանց հայաստանցի կոլեգաների աշխատանքային կենսագրության մեջ, որոնք վաղեմի բարեկամական գործարար հարաբերությունների մեջ են, նոր էջը սկսվեց համառոտ աշխատանքի սկզբնական փուլում ծառացած խնդիրների խոր ուսումնասիրությունից։ Գործարանում եղան միավորման ղեկավարները և առաջատար մասնագետները։ Քննությունը հետաքրքրվեցին ձեռնարկության տեխնիկատնտեսական վիճակով, նրա ֆինանսական դրությամբ։ Ինչպես պարզվեց, գործը շատ կան։

— Մենք անհապաղ ձեռնամուխ եղանք հասունացած պրոբլեմների լուծմանը,— Արմենպրեսի թղթակցին ասաց գործարանի դիրեկտորի տեղակալ Կարեն Գևորյանը։— Մեր հայրենակիցները կմասնակցեն ձեռնարկության տեխնիկական վերազինմանը, կօգնեն բազմազանացնելու թողարկվող արտադրանքի տեսականին։ Այսպես, մենք Հայաստանից կստանանք բյուրեղապակու պատրաստուքներ հետագա մշակման և այդ արժեքավոր ապակուց ջահեր թողարկելու համար։ Դա թույլ կտա ընդարձակել արտադրությունը, լուծել վերաբնակների աշխատանքի տեղավորման հարցը։ «Լույս» արտադրական միավորման մեր կոլեգաների օգնությամբ կկառուցվի և շահագործման կհանձնվի մեր գործարանի մասնաճյուղը։ Միավորումը նաև օժանդակություն ցույց կտա խոշորացնելու գործարանի ստորաբաժանումները։

Բարեկամների հանդեպ պարտքի տակ չեն մնա նաև զարարազցի վարպետները։ Նրանք զգալիորեն կավելացնեն պլաստմասայե բարձրորակ դետալների թողարկումը, որոնց սուր կարիքը զգում է միավորումը։

Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի կոլեկտիվը, ոգևորությամբ ընդունելով «Լույս» արտադրական միավորման մեջ գործարանը մտցնելու լուրը, ձգտում է անհարմար կացության մեջ չդնել հայրենակիցներին։ Իսկ արցախցի լուսատեխնիկները աշխատել կարողանում են։ Ձեռնարկության արտադրանքը՝ էլեկտրալուսավորման ամրաները, ցերեկային լուսավորման լամպերը, ինչպես արտադրատեխնիկական, այնպես էլ կուլտուր-կենցաղային ու բժշկական մյուս արտադրատեսակները, մատակարարվում են Սովետական Միության հարյուրավոր քաղաքներ, արտահանվում մի շարք արտասահմանյան երկրներ։

Այս օրերին ձեռնարկության կոլեկտիվը, որն անցած տարվա սկզբից աշխատում է լրիվ տնտեսաշվարկի և ինքնաֆինանսավորման պայմաններում, ջանքեր է գործադրում հաղթահարելու հայտնի իրադարձությունների կապակցությամբ առաջացած թերացումները։ Հաջողությամբ են կատարվել պայմանագրային պարտավորություններով նախատեսված և ապրանքային արտադրանքի թողարկման փետրվար ամսվա առաջադրանքները։

(Արմենպրեսի սեփ. թղթ.)